Լեռնի զարհուրաշութիւն Գուէթի, զԵ-զեկիոյ, զՅովսիայ, զԿոստանդիանոսի, ըղ-Թէոդոսի և զՏրդատայ, զիմաստութիւն Սողոմոնի և Զօրաբաբելի, զԴանիէլի, և զՅուսեփայ, զողորմածութիւն Աբրահա-մու և զՅովբայ, զխոնարհութիւն Իսահա-կայ և Իսրայէլի, զհեզութիւն Մովսէսի և զԴաւթայ, զքաջութիւն Սամսոնի և զՏրդատայ. և զամենայն բարեձևութիւնս ըստ նմանութեան բարեզարդ թագաւորացն որ 'ի հնումն և 'ի նորումն։ Կացցէ՛ և մնասցէ՛ ա-նունն սորա ընդ արևու յառաջ քան զլու-սինն՝ ազգէ մինչև յազգ։ Ծագեսցի՛ յա-ւուրս սորա արդարութիւն, բազում խա-ղաղութիւն մինչև կատարեսցի լուսինն։ Տի-րեսցէ՛ սա 'ի ծովէ մինչև 'ի ծով, և գետոց մինչև 'ի ծագս աշխարհի։ Առաջի սորա թշնամիք իւր անկցի՛ն. և զհող ոտից սո-րա լիզեսցե՛ն։ Տուցէ՛ սա շնորհ 'ի Տեառ-նէ՝ առաջի ամենայն բնաւորաց աշխար-հի։ Եւ զամենայն բարիս որ յարիցէ 'ի վերայ սորա, 'ի պարտութիւն մնասցէ՛ Տէր։ Երկայն ամօք և խաղաղական կեն-դանութեամբ թագաւորեսցէ՛ սա 'ի կեանս յայս ծիրանածին որդւովք իւրովք և զար-միւ, և 'ի հանդերձեալն արքայ թագաւորա-ցըն թագակից և աթոռակից եղիցի։ Մի պակասեսցէ 'ի զաւակէ սորա այր՝ որ նստցի յաթոռ թագաւորութեան Ազգիս Հայկա-զեան. այլ ըստ աւուրցն երկնի որ 'ի վերայ երկրի, և ընդ պայծառութեան լուսաւո-րացն՝ եղիցի՛ մշտնջենաւորութիւն զաւա-կաց սորա և պայծառութիւն յաշխարհի, 'ի պատիւ և 'ի փառս Եկեղեցւոյ Աստուծոյ և հաւատացելոց Քրիստոսի։ Ընդ Գէորգայ շնոր հարաշխութեան և ամենայն անդամոցս յար-մարութիւն։ Շնորհեսցի՛ յառատապարգև Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ շնորհք ողորմութեան և պարգևք բարութեան, Նախ Քահանայականս լրութեան, և Քահանա-յականին կատարողութեան։ Ընդ իծ Հայ-րապետիս մերոյ, պարկեշտ պաշտամամբ սպա-սաւորել Աստուածային խորհրդոյս յԵկե-ղեցի սուրբ 'ի յերկրի։ Գթութիւն Մար-դասէր Հոգւոյն Աստուծոյ հանգիցէ՛ 'ի հո-գիս ննջեցելոցն մերոց, և յարուսցէ՛ զնոսա 'ի կեանս և 'ի հանգիստ յաւիտենական, մանաւանդ զնախայիշատակեալ նախնիս մեր պսակաւորիս, զՌուբինեանն, յորոց երա-նելին Զապել թագուհի, որոյ ողորմու-թեանն և առատ պարգևացն՝ որ առ Ս———Մ-Նաչանան, պարտ է մեզ նմանութիւն, և եւ մեծագունից քան զմեզ. ընդ որում զանձառութիւննն ընկալցի փոխարէն 'ի հանդերձեալ հատուցման արդարոց։ Եւ Զեզ ամենեցուն լողացդ շնորհեսցէ՛ Տէր վարձս բարեաց. որպէս զի յամենեցունց փառաւորեսցի միանական սուրբ Երրոր-դութիւնն և մի Աստուածութիւն՝ այժմ և միշտ և յաւիտեանս։

---

# ԱՂԵՐՍ

## ԱՌ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ

Մշտածաւալ Հոգիդ Աստուած,
Յիս ծաւալեա՛ քո շնորհ,
Շնորհաց քոց տուն զիս յարդարեա՛
Ընդ մուտ գործիլ տարւոյս նոր.
Նորոգելով մարմնոյս տապան
Ի հնոյ մեղաց զերծ արա՛,
Ընտելական քեզ կայցին
Ի ձօն եղէց յարակայ։
Յուզի բարեաց նախաշաւիղ՝
Ուղղեա՛ զգնացս բարեկար,

Բարձր 'ի գլուխ տուր ինձ պարծիլ
Քոյով շնորհիւ անդադար։
Դադար առնէ յայսմհետէ,
Մոռանայ զիս հին տարին,
Տարին անեմ ես անցաւոր,
Յոր փուշք մեղաց յիս հարին։
Զո՛ր և կորեան զփարսըս մեղաց
Խարդախողին 'ի մարմնոյս,
Մարմնով փրկեալ քեզ փառակից՝
Զոր միածինն փորձելոյս,։
Փորձութեամբ իսկ անմտաբար
Գոմ տարագիր 'ի շնորհացդ,
Շնորհ ունիմ 'ի գութ սիրոյդ,
Պճնիլ շքով քոյդ փառաց։
Փառաւորեա՛ տէր իմ գթած
Աղքատնմաց զիմ հոգի,
Հոգի առեալ թևակոխել
Յերկնից խորան կաթողին։
Գին եմ արեան սրտի սիրած
Զոր ծնողին Յիսուսի,
Յիսուս փրկիչ 'ի հրեշտակէն
Ի կտակի անդ լսի։
Լո՛ւր զիմ երկին և դու երկիր
Աւետաբեր զայս պատգամ,
Պատմել արդ զամ թէ հինն աւուրց
Զի՞ ետ մարդկան ազատ կամս։
Կամաւ զխաչ յանձն էառ
Աստուածորդին տիրաբար,
Տիրօղ ուսոյց առ ոտն կոխել
Զչարին սերմունս յաղթաբար։
Յաղթօղ արա՛ հեղումն առատ
Շունչ Աստուծոյ մեծութեան,
Մեծ է պարգև քոյդ բարութեան,
Եւ յաշխարհի չէ՛ք սահման։
Սահմանափակ է բնութիւն
Զողողանդեալ վիճակիս,
Վիճակ անմեղ խաբմամբ չարին
Կորոյս բնաւ մեր նախնիս։

Նախնի գթած հաստիչ բարիդ
Անտես չառեալ հոգ կալաւ.
Կա՛լ զիմ տգեղ զպատկեր հղծեալ
Սրբեա՛ զի՛ր տէր ընդ յարկաւ։
Յարկ զօրութեան խոստովանիմ,
Ուր ախորժես զօթևան.
Օթեա՛ 'ի յարկս շարժուն շիրմիս
Զի ես եղէց անսասան։
Սաստիւ սաստեա՛ ժանտ գռողին,
Յինքն ամփոփել զասպար իւր,
Իւրակերպից չար գուպարաց
Խափան տալ, յոր բորբոքիւր։
Բորբոք 'ի սէր տո՛րկ յիմ սրտի
Սիրոյ աղբերդ լիութեան.
Լիովին ես զոր ախորժեմ՝
Ըմպել զբաժակ զխտութեան։
Գիտակն ամէն իմաստութեան
Զքեն ասաց իւր դասուց,
Դաստիարակ նա ձեզ լիցի.
Եւ ուսուցիչ խրատուց։
Խրատ տուեալ իւրոյ հօտին
Ի մէջ բնակիլ Սաղիմայ,
Սաղիմ էր մեծ խուժան ազգաց
Քաղաք ընտիր Բէթսանայ։
Բէթսան տեղի ժանեաց փղաց
Թարգմանութեամբ իմանամ,
Իմանալեաց տէր արարօղ
Դի՛ր հովանի ինձ խնամ։
Խնամօղ սիրոյն սիրելաբար
Զքեն ուսոյց այնց սատար,
Սատարելով նոցին խմբից,
Բաշխօղ շնորհ տէր արդար։
Արդարութեամբ կանուխ զեկոյց
Աշակերտաց Հայրածինն,
Զոր զօրութեամբ առջիք զհոգի
Պէսպէս ձրից առանձինն։
Անձնաւոր Եդ Զոր յէութեան
Ինքնդ յինքեան զօրութիւն,

Զօրացո՛ զիս հոգւով մատչել
 Յանհուն բեմբիդ սրբութիւն:
Արբիչ հանուրց էից բնաւից
 Բոլորովին հուր ծախիչ,
 Ծախող փշոց ախտից մեղաց
 Որպէս զսկի ես մաքրիչ:
Մաքուր Հոգի միշտ զօրավիգ
 Խաւար մտացս լուսատու,
 Տո՛ւր ինձ չուել քոյին լուսով
 Յուղի առ քեզ երկնաչու:
Չու տարբեալ յերկրէ յերկինս
 Հօր աթոռոյ ժառանգորդն,
 Ժառանգակիցդ փառաց վեհին
 Մեզ խոստացար առաջնորդ:
Առաջնորդեա՛ մեզ տէր Աստուած
 Յայն ճանապարհ, զոր սիրես,
 Սիրով և մեր գալ 'ի մահաղ,
 Արդարութեամբ ում տիրես:
Տիրող կարգաց եկեղեցւոյ
 Որպէս արքայ որոշօղ,
 Որոշեցեր զամենեսին
 Յուրոյն պաշտօն ընթացօղ:
Ընթացուցեր զանօթն ընտիր
 Եւ զԲառնաբաս ծառայօղ,
 Ծառայելով գործոյ բանին
 Սիրոյ ազդմամբ ցուցանօղ,
Ցոյց տէր Հոգի ընտրօղ համակ
 Սեռից մարդկան քաջ գիտակ,
 Գիտութեամբ խակ զայլս ընտրեցեր
 Զոմանս հովիւ և գուշակ:
Գուշակ լինել մեզ ապառնեաց
 Եւ վարդապետս օրինաց,
 Յօրէնս քոյոց եօթնեակ շնորհաց
 Գրիչ գոլով պատգամաց:
Պատգամաւոր յառաջընթաց
 Ամէն լեզուաց ազգաց`
 Գէտ և մարգեալ դու արարեր
 Սիրով կոչել զՀայր Աստուած:

Աստուածառաք տէր կենդանի
 Եւ մեռելոցս յարուցիչ,
 Յարո՛ և զիմ մեռեալ հոգի`
 Ի թշնամեացս ազատիչ:
Ազատարարդ 'ի մեզ բնակեալ
 Մեռո՛ զմեղս հեշտութեան,
 Հեշտ արա՛ զիմ հոգի հանգչել
 Ի գոգ սիրոյ Օծութեան:
Օծման յարկիս տէր և իշխան
 Առատ պարգև զօրաւոր,
 Զօրացուցիչ յուսացելոյս,
 Ճ՛րագ հոգւոյս լուսաւոր:
Լոյս 'ի լուսոյ լուսաւորեա՛
 Զաչս մտաց իմ հոգւոյ,
 Հոգի անեղ զիս կացո՛ ընդ
 Պատուանդանաւ աթոռոյ:
Աթոռակցին անհաս Էիդ
 Արեամբ գնեալ փրկեցայ,
 Փրկեա՛ զիս տէր յալեկոծից
 Մեղմելս կրից զխըրասահ:
Սահեալ բնութեանս քև զօրացեալ
 Արկին առցէ զօրութիւն,
 Զօրութեամբ քո տո՛ւր ինձ վանել
 Սով, զհալածանս, զնեղութիւն:
Նեղ և յանձուկ ճանապարհին
 Օգնեա՛ ինձ տէր զթութեամբ.
 Գթով սիրոյդ պայծառ հոգւով
 Արա՛ զիս տուն ընտրութեամբ:
Ընտրօղ ողջոյն եկեղեցւոյ
 Փառաբանիչս դասադաս,
 Դասուց սրբոց պարգև փառաց
 Ձրի շնորհօք համեալ տաս:
Տանարանեայ պատգամ հնոյ
 Գծագրեալ առ 'ի քէն,
 Ի քէն արբին զուղխս փափկութեան
 Եւ անվթար 'ի կարգէն:
Կարգ և շնորհ բժշկութեան
 Յաջողութիւն պարգևես,

Պարզէ մտաց հասու լինել
Այնց իմաստից, զորս կամիս։
Կամօք քոյին արդ զիմ կնքեա
Բանս գովեստից բարերար,
Բարոյդ հաղորդ արա զանձն իմ
Տէր գրչիս միշտ և յար։

ԵՂԻԱԶԱՐ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ

---

# ԱԶԳԱՅԻՆ

Վեհափառ կաթողիկոսը, որ անձնական տկարութենէ ստիպեալ՝ յուլիս 12-ին մեկնելով Հառիճայ վանքը օդափոխութեան գացած էր, գոհութիւն Աստուծոյ, կատարեալ առողջութիւն ստանալով անդ, ամսոյս 11-ին վերադարձաւ այսր 'ի Սուրբ Էջմիածին։

---

Գեր. Գէորգ վարդապետ Երմաշու վանահայրը և Գեր. Վահան վարդապետ Պանտրմայու վիճակի Առաջնորդը՝ ներկայ ամսոյս 14 Խաչվերացի կիւրակէն Եպիսկոպոսական բարձր աստիճանին արժանացան՝ ձեռնադրութեամբ նորին Վեհափառութեան Կաթողիկոսի ամենայն Հայոց։

---

Պարոն Մկրտիչ Սանասարեանց Ազգասէր անձը, որոյ եռանդը և բարեգործութիւնքը արդէն մեր սիրելի Ազգայնոցմէ ոչ սակաւուց քաջայայտ է, Ս. Աթոռոյս տպարանին հետևեալ նուէրները բարեհաճած է մատուցանել։

Մի Արագաձոյլ մեքենայ.
Մի մեքենայ գծեր կտրելու.
Պղնձեայ չորս տեսակ գծեր.
Մարզաններ.
Զանազան գեղեցիկ ծաղիկներ, զարդեր, թուանշաններ և չափեններ։

Բաց 'ի սոցանէ, ինչպէս անցեալ տարի. նոյնպէս այս տարի ընձայած է նուիրել տարեկան երկու երկու օրինակ Արարատ, այսինքն, 2 օրին. Ալեքսանդրապոլոյ. 2 օրին Կարնոյ. 2 օրին. Վանայ. 2 օրին. Մշոյ. 2 օրին. Թաւրիժոյ. 2 օրին. Թէհրանի Ազգային ուսումնարանաց։

Աւստի կը փութամք մեր խորին շնորհակալութիւնը յայտնել Նորին Ազգասիրութեան Պր. Մկրտչի Սանասարեանց, և բարեմաղթել 'ի Տեառնէ, որ փարձահատոյց լինի նմին. և օրհնէ նորին բոլոր ձեռնարկութիւնքը և բարի նպատակները. և արժանաւոր պարգևօք պսակէ զնա թէ աստ և թէ 'ի հանդերձեալն։

---

Օգոստ. 21-ին կէս օրէն զկնի ժամը երոպական չորսին սկիզբը՝ սաստիկ երկրաշարժութիւն պատահելով 'ի Շամախի, քաղաքին բոլոր բնակիչքը ահուդողի մէջ պաշարած է՝ ինչպէս որ կը գրէ Գեր. Անդրէաս Եպիսկոպոս՝ յիշեալ վիճակին հոգևոր Տեսուչը առ Վեհ. Կաթողիկոսն փութացուցած յայտարարութեամբ։

Քաղաքին բնակիչ հինգ հազար տանց հարիւր քան տունէն 'ի զատ, մնացեալ բոլորը գրեթէ խախտուած ու մեծամեծ վնասներ կրած են։

Հայոց հոյակապ Ս. Աստուածածին Մայր Եկեղեցւոյն տանիքը, կաթուղիկէն, թաղակապ կամարքը մանաւանդ արևմտեան կողման, և զանգակատունը խիստ խախտուած ու վնասաւորուած են։ Նմանապէս արևմտեան կողման որմունքը տանիքէն մինչև հիմը, ինչպէս նաև Եկեղեցւոյն չորս սիւներէն մին կամարէն մինչև ստորոտը ճեղքուած են. այնպէս որ Եկեղեցւոյն մէջ ժամերգութիւն պաշտելը կասկածելի միանգա-